ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ
EUROPEAN BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) հիմնադրվել է 1991թ-ին՝ հետխորհրդային երկրներում մասնավորեցմանը խթանելու և բիզնեսին աջակցելու նպատակով:

ՎԶԵԲ-ի բաժնետերեր են հանդիսանում 65 երկրներ, ինչպես նաև Եվրոպական Միությունը և Եվրոպական ներդրումային բանկը:

Հայաստանի Հանրապետությունը ՎԶԵԲ-ին անդամակցում է 1992թ-ից: Բանկի հետ արդյունավետ համագործակցությունն առ այսօր ներառում է 1,403 մլն եվրո արժողությամբ ներդրումային փաթեթ և 180 ծրագրեր, ինչը նպաստել է Հայաստանում ավելի կայուն ֆինանսական հատվածի կառուցմանը, էներգետիկ համակարգի, ճանապարհային և ջրային ենթակառուցվածքների արդիականացմանը, ինչպես նաև երկրի մրցունակության բարձրացմանը:

Հայաստանի համար նոր՝ 2019-2024թթ. ռազմավարությունը ՎԶԵԲ տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2019թ. նոյեմբերի 27-ին:

2020թ. փետրվարի 4-ի ՎԶԵԲ Կառավարիչների խորհրդի որոշմամբ հաստատվել է 2021 թվականին Երևանում ՎԶԵԲ-ի տարեկան ժողովի անցկացումը: